ԴԱՎԻԹԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ
(ԱԻ)

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՈՎ ՀՀ ԵՎ ԼՂՀ ԴԵՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ-ՔԱՅՔԱՅԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Տեղեկատվական անվտանգության ապահովումը ժամանակակից աշխարհում պետությունների ու ազգերի գոյապահպանման և արդյունավետ կենսագործունեության ապահովման կարևորագույն երաշխիքներից է: Ներկայումս աշխարհում ընթացող զարգացումները գալիս են վկայելու տեղեկատվական պատերազմի կարևոր նշանակության մասին՝ այն դարձնելով արտաքին քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից մեկը: Համացանցը հնարավորությունների և մարտահրավերների ունիվերսալ համակարգ է, որը մեր օրերում դարձել է քարոզչական և հակաքարոզչական աշխատանքների իրականացման, հետախուզական-քայքայիչ գործունեության ծավալման կարևորագույն միջոց: Հատկանշական է, որ այդ խնդրով դեռևս XX դարի վերջերից զբաղվում է ԱՄՆ-ի պաշտպանության ազգային ինստիտուտը, որի կողմից 1995 թ. հրատարակած «Ինչ է տեղեկատվական պատերազմը» աշխատության մեջ խոսվում է տեղեկատվական պատերազմների յոթ տարատեսակների մասին: Դրանք են.

1. հրամանատարական-կառավարչական,
2. հետախուզական,
3. հոգեբանական,
4. հակերային,
5. տնտեսական,
6. էլեկտրոնային,
7. կիբեռպատերազմ[1]:

XXI դարի սկզբներին համացանցի լայնորեն տարածման պայմաններում աշխարհի առաջատար հատուկ ծառայություններն իրենց

---

[1] Դեմոյան Հ., Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ քարոզչության և հակաքարոզչության կազմակերպման և իրականացման եղանակների մասին, http://www.noravank.am/upload/pdf/76_am.pdf

հետախուզական գործունեության մեջ սկսեցին լայնորեն կիրառել հենց համացանցը: Մասնավորապես, 2005 թ. ռուսաստանյան մամուլում եղան հրապարակումներ, որ բրիտանական հետախուզությունը սկսել է հավաքագրումներ իրականացնել համացանցի միջոցով[2]: Նման տիպի հավաքագրումները լայնորեն տարածված են հատկապես ծայրահեղականների շրջանում, որոնք հիմնականում հավաքագրում են մահապարտ-մարտիկների: Այսօր աշխարհի տարբեր ծայրերում նմանատիպ հավաքագրումներ իրականացվում են «Իսլամական պետության» կողմից: ՌԴ Ազգային հակաահաբեկչական կոմիտեի ներկայացուցիչ Անդրեյ Պրժեզդոմսկին հայտարարել է, որ համացանցն ահաբեկչական խմբավորումների անդամների հավաքագրման միջոց է դարձել[3]: Ամերիկյան հատուկ ծառայություններն ակտիվորեն գործում են Facebook, Twitter, MySpace, LinkedIn սոցիալական ցանցերում[4]: ԱՄՆ-Չինաստան «հետախուզական մրցավազքի» պայմաններում ներկայումս մեծ դերակատարում ունի ոչ միայն մարդը, այլ նաև համակարգիչը: Հաճախակի փոխադարձ ձերբակալություններ են տեղի ունենում ԱՄՆ-ում և Չինաստանում՝ միմյանց մեղադրելով սոցիալական ցանցերում հավաքագրումներ իրականացնելու մեջ: Հատուկ ծառայությունները արդեն վաղուց են համացանցն օգտագործում լրտեսության համար, բացի այդ շատ տարաբնույթ խմբավորումներ համացանցի միջոցով հավաքագրում են մարդկանց:

Արծարծվող թեմատիկան ուսումնասիրել են բավական թվով հետազոտողներ, որոնց թվում են ռուս հայտնի ծրագրավորող, հակավիրուսային անվտանգության մասնագետ, «Կասպերսկի լաբորատորիայի» հիմնադիր Եվգենի Կասպերսկին, ամերիկացի հայտնի համակարգչային մասնագետ Ջոել Մակնամարան: Վերջինիս հայտնի աշխատություններից են «Համակարգչային լրտեսության գաղտնիքները», «Համակարգիչներ և ծրագրեր», «Համակարգչային գրականություն» և այլն:

Ժամանակակից տեխնիկական զարգացած դարաշրջանում տեղեկատվություն ստանալն ու տարածելը բավական հեշտացել է: Եթե

---

[2] Бусигын А., Британская разведка теперь вербует через Интернет, http://www.utro.ru/articles/2005/ 10/13/485702.shtml

[3] Համացանցը՝ ահաբեկիչների հավաքագրման միջոց, http://operativ.am/?p=104104&l=am/hamacancy%D5%9D+ahabekichneri+havaqagrman+mijoc+

[4] Ամերիկյան հատուկ ծառայությունները ակտիվորեն գործում են սոցիալական ցանցերում, http://news.am/arm/news/16998.html

ընդամենը տարիներ առաջ հատուկ մարտավարություն, հստակ և հատուկ գիտելիքներ էին հարկավոր հակառակորդի մասին կարևոր ու փակ տեղեկություններ հայթայթելու համար, ապա այսօր համացանցը հնարավորություն է տալիս նոր մեթոդներով ու ձևերով, անգամ վիրտուալ, իրականացնել ինչպես հավաքագրումներ, այնպես էլ անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերում: Միայն «Վիկիլիքսի» հիմնադիր Ջուլիան Ասանժը, տարբեր գնահատականներով, բացահայտել է ԱՄՆ-ի պետդեպարտամենտի ավելի քան 250.000 գաղտնի փաստաթուղթ[5]: Ռուսաստանյան «Կասպերսկի» տեղեկատվական անվտանգության կազմակերպությունը պարզել է, որ եվրոպական այն երեք երկրների հյուրանոցներում, որտեղ «Միջուկային ծրագրի շուրջ» բարձր մակարդակի բանակցություններ են անցկացվել Իրանի հետ, համակարգչային ցանցում (ներառյալ WiFi կապը) ներդրված է եղել հետախուզական լրտեսող ծրագիր[6]:

Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների դեմ այս տիպի տեղեկատվական պատերազմի են լծվել ներկայիս Ադրբեջանի Հանրապետության հատուկ ծառայությունները՝ փորձելով իրականացնել հետախուզական-քայքայիչ գործունեություն: Այն իրենից ներկայացնում է նախնաառաջ հետախուզական բնույթի տեղեկատվության ձեռքբերումը հակառակորդ պետության արտաքին ու ներքին քաղաքականության, ռազմական ներուժի, տնտեսության, գիտատեխնիկական բնագավառի վերաբերյալ: Ինչպես փորձել ենք ցույց տալ սույն հոդվածում, ԱՀ հատուկ ծառայությունները, տիրապետելով հետախուզության ընդամենը պարզ ու հասարակ մեթոդներին, իրենց հետախուզական-քայքայիչ գործունեության համար որպես միջոց օգտագործում են հիմնականում համացանցը: Այս թեզը հավաստելու համար բերենք մի քանի օրինակներ:

ՀՀ ԱԱԾ կողմից բացահայտված առաջին դեպքը, որտեղ ԱՀ հատուկ ծառայությունների կողմից օգտագործվել է համացանցը, եղել է 2011 թ. հուլիսի 23-ին ձերբակալված Կարեն Մեհրաբյանի վերաբերյալ քրեական գործը[7]: Վերջինս, որպես տեղեկատվության փոխանցման մի-

---

[5] Энгдаль Уильям Ф., Wikileaks - опасное злоупотребление доверием, http://www.warandpeace.ru/ru/exclusive/view/53593/

[6] Իսրայելը լրտեսել է այն հյուրանոցների համակարգչային ցանցերը, որոնցում բանակցել են Իրանի հետ, http://razm.info/65670

[7] ՀՀ ԱԱԾ պաշտոնական կայքէջ, http://www.sns.am/index.php/am/news/173-23072011,:

ջոց, օգտագործում էր «agent.mail.ru» սոցիալական կայքը: Հատկանշական է, որ Կ.Մեհրաբյանը հավաքած տեղեկությունները ոչ թե փոխանցում էր այդ ծրագրով, այլ իր կողմից բացված էջում տեղադրում էր տեղեկատվությունը, արխիվացնում, իսկ «պատվիրատուն», այսինքն՝ Ադրբեջանի հատուկ ծառայության աշխատակիցը, բացում էր նույն էջը և անարգել օգտագործում արխիվացված տեղեկությունը:

Հաջորդ քրեական գործը վերաբերում է Մանե Մովսիսյանին, ով հանդիսանալով ՀՀ ՊՆ զորամասերից մեկի աշխատակից, համացանցի միջոցով ոչ միայն ռազմական բնույթի գաղտնի տեղեկություններ է փոխանցել պատվիրատուներին, այլև ներքաշվել համագործակցության մեջ[8]: Այսպես, ըստ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռի, 2012 թ. հունվարի 8-ին Կապան քաղաքի 31-ամյա բնակչուհի Մանե Մովսիսյանը «odnoklassniki.ru» սոցիալական ցանցի միջոցով ծանոթանալով «Տիգրան Դերվիշյան» տվյալներով օգտատիրոջ հետ, նրան է փոխանցել իրեն հասանելի տեղեկությունները, որոնք կարող էին օգտագործվել Հայաստանի Հանրապետությունն ու ՀՀ Զինված ուժերը վարկաբեկելու նպատակով: Զորամասում աշխատելու ընթացքում Մ.Մովսիսյանը համացանցի միջոցով Ադրբեջանի հատուկ ծառայության աշխատակիցներին է փոխանցել նաև ծառայության բերմամբ իրեն հայտնի դարձած տեղեկությունները, որոնք հանդիսացել են ռազմական բնագավառի պետական գաղտնիք[9]:

Նույն՝ 2012 թ. հուլիսին, կրկին «odnoklassniki.ru» սոցիալական ցանցի միջոցով ծանոթանալով Թուրքիայի Ստամբուլ քաղաքում բնակվող, սփյուռքահայ կազմակերպության անդամ ներկայացած ոմն Սամվել Ազատյանի հետ, ԼՂՀ քաղաքացիներ, ՊԲ պայմանագրային զինծառայող Ռաֆայել Ավագյանն ու «Արցախգազ» ընկերության հսկիչ Դավիթ Բարսեղյանը համագործակցել են ադրբեջանական հետախուզության աշխատակիցների հետ և համապատասխան գումարների ու նվերների դիմաց ԼՂՀ տարածքում հավաքել նրանց հետաքրքրող պետական գաղտնիք հանդիսացող բազմաբնույթ տեղեկություններ, լուսանկարներ, որոնց մի մասը «Skype» տեսածրագրի միջոցով փոխանցել են «պատվիրատուներին»:

Համացանցային գիտելիքի պակասի պատճառով այսօր սոցիա-

---

[8] Հայաստանի ԱԱԾ-ն լրտեսության համար ձերբակալել է կին զինծառայողի, http://news.am/arm/news/159626.html

[9] https://www.youtube.com/watch?v=he_LoekPXjg

լական ցանցերի սովորական օգտատերը, որն ընկնում է օտարերկրյա հատուկ ծառայությունների տեսադաշտ և ակամա դառնում թիրախ, սկզբնական շրջանում չի էլ պատկերացնում, թե հնարավոր է՝ իր գրուցակիցը հանդիսանում է հատուկ ծառայության աշխատակից, իսկ սովորական ու առօրյա թվացող խոսակցությունը կարող է վերաճել պետական դավաճանության: Այսպես, ադրբեջանական հետախուզության աշխատակիցը հայազգի օգտատիրոջ անուն-ազգանունով, ՀՀ ազգային հերոսների նկարներով զարդարված սոցիալական կայքով մուտք է գործում ՀՀ և ԼՂՀ տարբեր զորամասերի անվանումներով բացված ինտերնետային խմբերի մեջ կամ զինվորական համազգեստով պատկերված անձանց էջ և ժարգոնային հայերենով խոսակցություն սկսում՝ փորձելով տեղեկություններ ստանալ ծառայության վայրի, դիրքերի, զենքերի, հրամանատարների մասին[10]:

Ու նմանատիպ բովանդակությամբ զրույց վարվում է բազմաթիվ օգտատերերի հետ, որոնց մի մասը, հասկանալով խոսքը ինչի մասին է, հետ է կանգնում, մի մասը, չհասկանալով, շարունակում է պատմել իր զորամասի վերաբերյալ ինչ հիշում է, մի փոքր հատվածն էլ, ովքեր պատրաստ են գումարի դիմաց վաճառել հայրենիքը, արդեն հասկանալով և ստանալով ֆինանսական մեծ աջակցության առաջարկ՝ ներքաշվում են պետական դավաճանության մեջ:

Վերոգրյալի հավաստիությունը փաստելու համար հղում կատարենք ՀՀ ԱԱԾ մամուլի տարածած հաղորդագրություններին, համաձայն որոնց, ադրբեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցները «odnoklassniki.ru» սոցիալական ցանցում գրանցում են հայկական տվյալներով կեղծ էջեր, ներկայանում որպես ՀՀ կամ ԼՂՀ Զինված ուժերի զինծառայողներ՝ փորձելով ՀՀ քաղաքացիների հետ նամակագրական կապեր հաստատելով կորզել տեղեկատվություն: Մասնավորապես, ՀՀ ԱԱԾ կողմից բացահայտվել են «odnoklassniki.ru» սոցիալական ցանցում ադրբեջանական հատուկ ծառայությունների կողմից գործադրված հետևյալ հետախույզ-օգտատերերով կեղծ էջերը. «Seyran Dervishyan», «S Dr», «Tigran Dervishyan», «Seyran Derv», «S.S.», «Samvel Samvel», «Ա Ս», «Артем Арутюнов», «Albert Mnacakanyan», «A M», «Ruben Hayrapetyan», «(((((((RH)))))))», «Gevorg Saroyan», «Alik Mesropyan», «Sergey Karapetyan»[11], «Hovik Margaryan», «Edgar Minasyan», «Rafik Tov-

---

[10] https://www.youtube.com/watch?v=he_LoekPXjg

[11] ՀՀ ԱԱԾ-ն ադրբեջանցի հետախույզների է բացահայտել Odnoklassniki.ru

masyan», «Norik Barsegyan», «Norik Margaryan» և այլն[12]:

Համացանցի միջոցով ադրբեջանական հատուկ ծառայությունների կողմից հետախուզական-քայքայիչ այլ գործունեության փորձեր ևս իրականացվում են: Մասնավորապես, ադրբեջանական հաքերները, հիմնականում ԱՀ կամ ՀՀ տոների, հիշատակի օրերի նախօրյակին փորձում են կոտրել ՀՀ պետական հիմնարկների, տարբեր գերատեսչությունների, մասնավոր ընկերությունների կամ ուղղակի հասարակ օգտատերերի կայքեր, սոցիալական էջեր[13]:

Բացի այդ, ադրբեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցները կամ նրանց գործակալները, ցանկանալով հեղինակազրկել հայազգի այս կամ այն հասարակական-քաղաքական գործչին, կամ հայտնի քաղաքագետի, պատմաբանի, ով հեղինակություն է վայելում համաշխարհային գիտական ասպարեզում և զբաղվում է ադրբեջանական կեղծ քարոզչության բացահայտումներով, համացանցով վերջինիս վերաբերյալ տարածում են կեղծ տեղեկատվություն՝ նրան մեղադրելով ՀՀ հատուկ ծառայության մարմինների հետ համագործակցության և ՀՀ հատուկ ծառայությունների գործակալ լինելու մեջ:

DAVIDAVYAN TIGRAN
(IOS)

DESTRUCTIVE INTELLIGENCE ACTIVITY BY THE SPECIAL SERVICES OF AZERBAIJAN VIA INTERNET AGAINST REPUBLIC OF ARMENIA AND NAGORNO KARABAKH

Cyber spying or cyber espionage, today is used by intelligence services of almost all countries, especially by competitor countries or countries in conflict. Azerbaijani special services also make great efforts to carry out cyber espionage against Armenia and Nagorno-Karabakh, as Azerbaijani military and political leadership tries to resolve the Armenian-Azerbaijani conflict by use of force.

կայքի միջոցով, http://telecom.arka.am/am/news/internet/hetaxuycner_odnoklassniki_ru_/

[12] ԱԱԾ-ն բացահայտել է «Օդնոկլասնիկի» կայքում գրանցված ադրբեջանական հատուկ ծառայությունների օգտատերերին, http://mitk.am/2015/05/ասած-ն-բացահայտել-է-օդնոկլասնիկի-կայքո/

[13] Մարտիրոսյան Ս., Կիբերընդհարումներ Հայաստանի և Ադրբեջանի միջև. իրավիճակի զարգացման դինամիկան, http://theanalyticon.com/?p=4580